


WILCO

Հաստատված է «ՎԻԼԿՈ» ՍՊԸ-ի Միակ Մասնակից
Պարադեպլաց Լիմիթեդի կողմից
Տնօրեն Օլիվիա Կասինու



14 նոյեմբերի, 2026թ.

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ ՊԱՀԱՌՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ

1.1. «Վիլկո» ՍՊԸ-ն (այսուհետ՝ «Ընկերություն» և/կամ «Պահառու») Հայաստանի
Հանրապետությունում (այսուհետ՝ ՀՀ) գրանցված և լիցենզավորված ներդրումային ընկերություն է:

1.2. Ընկերության տվյալներն են՝

1.2.1. Անվանում՝ «Վիլկո» ՍՊԸ

1.2.2. Ներդրումային ընկերության լիցենզիա՝ թիվ 0008

1.2.3. Հասցե՝ ՀՀ, ք. Երևան 0002, Սարյան փողոց 26/2

1.2.4. Կայք՝ wilco.am

2. ՀԻՄՆԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

2.1. Սույն Պահառության ծառայությունների մատուցման կանոնակարգում (այսուհետ՝
«Կանոնակարգ») օգտագործվող և սույն Կանոնակարգով չսահմանված հասկացությունները
մեկնաբանվում են Հայաստանի Հանրապետության օրենքներով և դրանց հիման վրա ընդունված
նորմատիվ իրավական ակտերով սահմանված իմաստով: Եթե համապատասխան սահմանումներ
նախատեսված չեն, ապա դրանք մեկնաբանվում են միջազգային գործարար պրակտիկային
համապատասխան, եթե կոնկրետ համատեքստից ակնհայտորեն այլ բան չի բխում:

2.2. Ընկերություն և/կամ Պահառու՝ «Վիլկո» ՍՊԸ:

2.3. Հաճախորդ՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որը հանդիսանում է ՀՀ ռեզիդենտ կամ ոչ
ռեզիդենտ և Ընկերությունից ստանում է սույն Կանոնակարգով սահմանված ծառայությունները:

2.4. Շահառու՝ անձ, որի օգտին մատուցվում են ծառայությունները:

2.5. Գործընկեր՝ անձ (ներառյալ, սակայն չսահմանափակվելով բրոքերներով, պահառուներով,
ներդրումային կամ ֆինանսական հաստատություններով), որի միջոցով կամ որի ներգրավմամբ
Ընկերությունը Հաճախորդին մատուցում է Ծառայությունները:

WILCO

2.6. ԿԲ՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ:

2.7. Հաղորդակցման միջոցներ՝ Ընկերության և Հաճախորդի միջև ծառայությունների մատուցման պայմանագրով սահմանված հաղորդակցման ուղիները:

2.8. Հաճախորդի ակտիվներ՝ դրամական միջոցներ և/կամ արժեթղթեր և/կամ ֆինանսական գործիքներ, որոնք պատկանում են Հաճախորդին և Հաճախորդի ու Ընկերության միջև կնքված գրավոր պայմանագրի հիման վրա փոխանցվել են Ընկերության տիրապետմանը և/կամ կառավարմանը, ինչպես նաև դրանց կառավարման արդյունքում ստացված ցանկացած եկամուտ: Սույն Կանոնակարգի նպատակներով, եթե համատեքստից այլ բան չի բխում, «արժեթղթեր» հասկացության ցանկացած հիշատակում ներառում է նաև «ֆինանսական գործիքներ» հասկացությունը:

2.9. Ծառայություն՝ Ընկերության կողմից բացառապես Գործընկերների միջոցով, վճարի դիմաց և Հաճախորդի հանձնարարականների հիման վրա մատուցվող պահառության ծառայություններ, ներառյալ՝ Հաճախորդի անունից և/կամ նրա օգտին արժեթղթերի և ֆինանսական գործիքների առուվաճառքը և դրանց հետ կապված այլ գործարքների իրականացումը՝ Կիրառելի օրենսդրությանը և կողմերի միջև կնքված Պայմանագրին համապատասխան:

2.10. Պայմանագիր՝ Հաճախորդի և Ընկերության միջև կնքված փաստաթուղթ, որը կարգավորում է կողմերի միջև իրավահարաբերությունները, նրանց իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև Կիրառելի օրենսդրությամբ թույլատրելի և կողմերի կողմից համաձայնեցված այլ պայմանները:

2.11. Հաշիվ՝ Ընկերության կամ Գործընկերոջ կողմից Հաճախորդի անունով՝ Ծառայությունների մատուցման նպատակով բացված հաշիվ, որում արտացոլվում են Հաճախորդի ակտիվները, արժեթղթերի նկատմամբ իրավունքներն ու սահմանափակումները, արժեթղթերից ստացվող եկամուտները, ինչպես նաև Կիրառելի օրենսդրությամբ սահմանված այլ տեղեկություններ:

2.12. Արժեթղթերի բլոկավորում՝ գործողություն, որի արդյունքում արժեթղթերի փոխանցումը կամ տնօրինումը արգելվում կամ սահմանափակվում է՝ գործարքի պայմաններին և/կամ Կիրառելի օրենսդրության պահանջներին համապատասխան:

2.13. Արժեթղթերի չեղարկում (մարում)՝ գործառնություն, որի արդյունքում արժեթղթերը դուրս են գրվում Հաճախորդի Հաշվից՝ դրանց թողարկողի կողմից չեղարկման կամ դրանց մարման կապակցությամբ:

2.14. Արժեթղթերի փոխարկում՝ մեկ դասի արժեթղթերը այլ դասի արժեթղթերի փոխակերպելու գործառնություն՝ թողարկողի կողմից սահմանված փոխարկման կանոններին համապատասխան:

2.15. Ռիսկերի բացահայտման հայտարարություն՝ Հաճախորդին ներկայացվող և նրա կողմից ստորագրվող փաստաթուղթ, որը նկարագրում է Ծառայությունների մատուցման ընթացքում հնարավոր իրավիճակներն ու գործընթացները, որոնք կարող են հանգեցնել կամ հանգեցնում են Հաճախորդի ակտիվների կորստի:

WILCO

2.16. Հաշվետու ժամանակաշրջան՝ տվյալ գործարքի կատարումից մինչև տվյալ գործարքի վերաբերյալ հաշվետվության՝ Հաճախորդին ներկայացնելն ընկած ժամանակահատվածը: Հաշվետու ժամանակաշրջանը համարվում է ավարտված, երբ Ընկերությունը տվյալ գործարքի իրականացումից հետո Հաճախորդին ներկայացրել է համապատասխան հաշվետվությունը:

2.17. Կիրառելի օրենսդրություն՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրքը, «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, դրանից բխող նորմատիվ իրավական ակտերը, ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերը, ինչպես նաև սույն Կանոնակարգի, Ընկերության ներքին իրավական ակտերի և Պայմանագրի դրույթները:

3. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

3.1. Սույն Կանոնակարգը սահմանում է Ընկերության կողմից Հաճախորդի ակտիվների օգտագործմամբ Ծառայությունների մատուցման կարգը՝ Կիրառելի օրենսդրության պահանջներին, ինչպես նաև Ընկերության ներքին ընթացակարգերին և քաղաքականություններին համապատասխան: Ծառայությունների մատուցումը չի հանգեցնում Հաճախորդի ակտիվների նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցման Ընկերությանը:

3.2. Ընկերությունը ՀՀ կենտրոնական բանկի կողմից լիցենզավորված իրավաբանական անձ է, որը մատուցում է ներդրումային ծառայություններ և գործում է ՀՀ կենտրոնական բանկի վերահսկողության ներքո:

3.3. Սույն Կանոնակարգը մշակվել և կիրառվում է Կիրառելի օրենսդրության պահանջներին համապատասխան:

3.4. Կանոնակարգը հրապարակային փաստաթուղթ է և հասանելի է ծանոթացման համար ցանկացած շահագրգիռ անձի: Այն հրապարակվում է Ընկերության պաշտոնական կայքում:

3.5. Կանոնակարգի յուրաքանչյուր դրույթ ենթակա է մեկնաբանման՝ դրա բառացի բովանդակությանը համապատասխան: Եթե որևէ դրույթի բովանդակությունը երկիմաստ է, այն մեկնաբանվում է Պայմանագրի, սույն Կանոնակարգի, Ընկերության ներքին իրավական ակտերի և Կիրառելի օրենսդրության համատեքստում:

3.6. Ընկերությունն իրավունք ունի միակողմանիորեն փոփոխել կամ լրացնել Կանոնակարգը՝ այդ մասին Հաճախորդին ծանուցելով Պայմանագրով սահմանված կարգով: Բոլոր նման փոփոխություններն ու լրացումները համարվում են Կանոնակարգի անբաժանելի մասը:

3.7. Հաճախորդին տրամադրվող տեղեկատվությունը, Հաճախորդի կողմից ներկայացվող հանձնարարականները և Հաճախորդի Հաշվով կատարված գործարքների վերաբերյալ հաշվետվությունները կազմվում և տրամադրվում են հայերենով, իսկ Հաճախորդի պահանջով՝ նաև այլ լեզուներով (օրինակ՝ անգլերեն կամ ռուսերեն): Տարբեր լեզուներով տարբերակների միջև անհամապատասխանության դեպքում գերակայում է հայերեն տարբերակը, եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

WILCO

3.8. Եթե սույն Կանոնակարգի ուժի մեջ մտնելու պահին Հաճախորդն արդեն ունի Ընկերության հետ կնքված բրոքերային ծառայությունների մատուցման պայմանագիր և/կամ վստահված կառավարման ծառայությունների մատուցման պայմանագիր, ապա առանձին պահառության ծառայությունների մատուցման պայմանագրի կնքում չի պահանջվում: Սույն Կանոնակարգի դրույթները համարվում են ամբողջությամբ կիրառելի նաև բրոքերային ծառայությունների և վստահված կառավարման ծառայությունների մատուցման պայմանագրերի նկատմամբ:

4. ՊԱՀԱՌՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1. Ծառայությունները Ընկերության կողմից մատուցվում են բացառապես երրորդ անձ հանդիսացող գործընկերների/պահառուների միջոցով՝ Կիրառելի օրենսդրության պահանջներին համապատասխան:

4.2. Ընկերության կողմից մատուցվող պահառության ծառայությունները ներառում են, սակայն չեն սահմանափակվում հետևյալով.

4.2.1. Հաճախորդների անունով Հաշիվների բացում, վարում և փակում,

4.2.2. Հաճախորդի՝ Ընկերությունում և Գործընկերոջ մոտ վարվող Հաշիվներում արժեթղթերի նկատմամբ սեփականության իրավունքների հաշվառման կազմակերպում,

4.2.3. Հաճախորդի ակտիվների պահպանում Գործընկերների մոտ՝ ապահովելով Հաճախորդի սեփականության իրավունքի ճանաչումը այդ ակտիվների նկատմամբ,

4.2.4. Հաճախորդի ակտիվների ընդունման և դուրսբերման գործընթացների համակարգում համապատասխան Գործընկերների միջոցով,

4.2.5. Արժեթղթերի փոխանցման իրականացումը համապատասխան Գործընկերների միջոցով համակարգում,

4.2.6. Տեղեկությունների և փաստաթղթերի փոխանցում ֆինանսական գործիքների թողարկողների, համապատասխան Գործընկերների և Հաճախորդների միջև,

4.2.7. Հաշվով կատարված գործարքների վերաբերյալ քաղվածքների և տեղեկանքների պատրաստում և տրամադրում,

4.2.8. Ընկերությունում Հաճախորդների անունով վարվող Հաշիվներում ֆինանսական գործիքների թողարկողների կորպորատիվ գործողությունների հաշվառում, ներառյալ՝ փոխարկումները, մարումները, բաժանումները (split), համախմբումները (consolidation), շահաբաժինների վճարումները և եկամուտների բաշխման այլ ձևերը,

4.2.9. Հաճախորդի համար Ընկերությունում և Գործընկերոջ մոտ վարվող Հաշիվներում գրավների, այլ ծանրաբեռնվածությունների, ինչպես նաև արժեթղթերի բլոկավորման և ապաբլոկավորման գործընթացների համակարգում,

WILCO

4.2.10. Հաշվի վերաբերյալ տեղեկատվության փոփոխությունների պատշաճ փաստաթղթավորումն ընկերության կողմից և դրանց համաձայնեցումը Հաճախորդի Հաշիվը վարող Գործընկերոջ հետ:

4.3. Պահառության ծառայությունները կարող են ընդգրկել ինչպես հայկական, այնպես էլ օտարերկրյա արժեթղթեր՝ բացառապես այն Գործընկերների միջոցով, որոնց հետ ընկերությունը կնքել է համապատասխան պայմանագրեր:

4.4. Ընկերությունը պարտավոր չէ ստուգել Գործընկերների և/կամ թողարկողների կողմից տրամադրված ծանուցումների և տեղեկատվության իսկությունը կամ ամբողջականությունը և պատասխանատվություն չի կրում դրանց ճշգրտության կամ ժամանակին տրամադրման համար:

4.5. Հաճախորդի համաձայնությամբ ընկերությունը կարող է մատուցել նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ թույլատրված այլ ներդրումային ծառայություններ:

4.6. Ծառայությունները մատուցվում են Հաճախորդի հետ կնքված Պայմանագրի հիման վրա, որով Հաճախորդը հաստատում է, որ ծանոթացել և ընդունել է սույն Կանոնակարգի դրույթները:

4.7. Ընկերությունը գործում է որպես Հաճախորդի հարկային գործակալ՝ Կիրառելի օրենսդրությամբ նախատեսված դեպքերում: Հաճախորդը սույնով հաստատում է, որ պատշաճ կերպով տեղեկացված է և համաձայն է, որ այն դեպքերում, երբ Ընկերությունը չի հանդիսանում Հաճախորդի հարկային գործակալը, Հաճախորդն ինքն է կրում իր հարկային պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հետ կապված բոլոր ռիսկերը: Մասնավորապես, Հայաստանի Հանրապետությունում թողարկված պարտատոմսերից ստացվող եկամուտների դեպքում հարկի պահումն իրականացվում է թողարկողի կողմից՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխան: Ընկերությունը որևէ պատասխանատվություն չի կրում այն դեպքերում, երբ օտարերկրյա թողարկողների արժեթղթերից ստացվող կամ վճարման ենթակա եկամուտների նկատմամբ համապատասխան հարկերը արդեն իսկ պահվել են օտարերկրյա թողարկողի կողմից:

4.8. Հաճախորդի հանդեպ իր պարտավորությունները կատարելիս Ընկերությունն իրավունք ունի առանց Հաճախորդի նախնական համաձայնության օգտվելու երրորդ անձանց՝ Գործընկերների ծառայություններից՝ սույն պայմանների և տվյալ Գործընկերների պայմանների համաձայն: Հաճախորդի հանձնարարականները կատարելու նպատակով Ընկերությունը կարող է, իր հայեցողությամբ, ներգրավել այլ կազմակերպություններ, այդ թվում՝ արժեթղթերի շուկայի մասնագիտացված մասնակիցների, ինչպես նաև օգտվել արտասահմանյան և տեղական շուկաների ծառայություններից ու հարթակներից, եթե Հաճախորդի հանձնարարականով հստակ նշված չէ կոնկրետ Գործընկեր, որի հետ Ընկերությունն ունի պայմանագրային հարաբերություններ:

4.9. Պահառության ծառայությունները մատուցվում են Հաճախորդի կողմից գրավոր կամ էլեկտրոնային եղանակով ներկայացված հանձնարարականների հիման վրա՝ սույն Կանոնակարգով և պահառության ծառայությունների պայմանագրով սահմանված կարգին համապատասխան: Ընկերությունը պարտավոր է վարել յուրաքանչյուր հանձնարարականի

WILCO

նույնականացվող գրանցում՝ ապահովելով դրա իսկությունը և ծագման աղբյուրի նույնականացման հնարավորությունը:

4.10. Եթե Հաճախորդը չի նշել կոնկրետ հարթակ կամ միջնորդ, Ընկերությունն իրավունք ունի հանձնարարականները փոխանցելու համապատասխան Գործընկերներին, ներառյալ՝ Ընկերության կողմից ընտրված արժեթղթերի շուկայի մասնագիտացված միջնորդներին կամ այլ մասնակիցներին:

4.11. Ծառայությունների մատուցման ընթացքում Հաճախորդին ներդրումային խորհրդատվություն չի տրամադրվում, եթե դրա վերաբերյալ առանձին պայմանավորվածություն առկա չէ: Համապատասխանաբար, Հաճախորդն ինքն է կրում իր հանձնարարականներից բխող բոլոր ռիսկերը:

4.12. Ծառայությունների մատուցման նպատակով Պահառուն կազմակերպում է Հաճախորդի համար պահառության հաշվի բացումը երրորդ անձ հանդիսացող Գործընկերոջ մոտ, որը նախատեսված է Հաճախորդի անունով և/կամ օգտին հաշվառվող բոլոր արժեթղթերի և դրամական միջոցների, ինչպես նաև դրանց հետ կապված իրավունքների, սահմանափակումների և կորպորատիվ գործողությունների հաշվառման համար:

4.13. Հաշիվը բացվում է՝

4.13.1. Հաճախորդի հետ Պայմանագրի կնքումից հետո,

4.13.2. Հաճախորդի նույնականացման ընթացակարգի ավարտից հետո՝ Կիրառելի օրենսդրության պահանջներին համապատասխան,

4.13.3. Հաճախորդի դասակարգման և ներդրումային պրոֆիլի գնահատման արդյունքների հիման վրա՝ Կիրառելի օրենսդրությանը համապատասխան:

4.14. Հաշիվը հանդիսանում է Հաճախորդի սեփականությունը և չի ենթադրում սեփականության իրավունքի փոխանցում Ընկերությանը: Ընկերությունը պարտավորվում է ապահովել, որ Հաշվի կառավարումն իրականացվի բացառապես Հաճախորդի հանձնարարականների հիման վրա:

4.15. Հաշվի բացումը Հաճախորդի համար չի ստեղծում գործարքներ իրականացնելու կամ ակտիվներ մուտքագրելու պարտավորություն:

5. ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻՑ ՊԱՀԱՆՁՎՈՂ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1. Ընկերությունը պարտավոր է Հաճախորդից պահանջել այն տեղեկատվությունը, որն անհրաժեշտ է Հաճախորդի նույնականացման, ֆինանսական միջոցների օրինականության ստուգման, հարկային հաշվետվությունների ներկայացման, ինչպես նաև Կիրառելի օրենսդրությամբ սահմանված այլ պահանջներին համապատասխանությունն ապահովելու համար:



WILCO

5.2. Ընկերությունը կարող է Հաճախորդից պահանջել, ներառյալ, սակայն չսահմանափակվելով, հետևյալ տեղեկատվությունը՝

5.2.1. անձը հաստատող փաստաթղթեր և նույնականացման տվյալներ,

5.2.2. եթե Հաճախորդը իրավաբանական անձ է՝ հիմնադիր փաստաթղթեր, ինչպես նաև տեղեկություններ ներկայացուցիչների և շահառուների վերաբերյալ,

5.2.3. տեղեկություններ հարկային ռեզիդենտության և հարկ վճարողի հաշվառման համարի (TIN) վերաբերյալ,

5.2.4. անհրաժեշտության դեպքում՝ տեղեկություններ Հաճախորդի գործունեության բնույթի և ֆինանսական միջոցների ծագման աղբյուրների վերաբերյալ:

5.3. Ընկերությունն իրավունք ունի հիմնվել Հաճախորդի կողմից տրամադրված տեղեկատվության վրա, բացառությամբ այն դեպքերի, երբ այն գիտեր կամ կարող էր իմանալ, որ տվյալ տեղեկատվությունն ակնհայտորեն հնացած, ոչ ճշգրիտ կամ թերի է:

5.4. Նախկինում ներկայացված տեղեկատվության փոփոխության դեպքում Հաճախորդը պարտավոր է այդ փոփոխության մասին հայտնի դառնալուց անմիջապես հետո տեղեկացնել Ընկերությանը:

6. ՀԱՃԱԽՈՐԴԻ ՀԵՏ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԼՔՈՒՄԸ

6.1. Պայմանագրի տիպային ձևը հաստատվում է Ընկերության իրավասու մարմնի որոշմամբ:

6.2. Պայմանագիրը Հաճախորդի կողմից կարող է ստորագրվել հետևյալ եղանակներից որևէ մեկով՝

6.2.1. Ընկերության գրասենյակում կամ Կողմերի միջև համաձայնեցված այլ վայրում՝ առձեռն,

6.2.2. էլեկտրոնային հաղորդակցման ցանկացած միջոցով:

6.3. Պայմանագիրը համարվում է կնքված այն պահից, երբ այն ստորագրվում է ինչպես Հաճախորդի, այնպես էլ Ընկերության կողմից:

6.4. Պայմանագրի ստորագրումից հետո Հաճախորդի անունով բացվում է Հաշիվ:

7. ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ ԵՎ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

7.1. Հաճախորդը կարող է գործարքների իրականացման վերաբերյալ հանձնարարականներ ներկայացնել գրավոր (թղթային) կամ էլեկտրոնային եղանակով (ներառյալ՝ էլեկտրոնային փոստի, Ընկերության կողմից տրամադրված համակարգերի կամ հեռահար հաղորդակցման այլ միջոցների միջոցով)՝ Ընկերության կողմից սահմանված կարգով: Ընկերությունը պարտավոր է ապահովել հանձնարարականների գրանցման և պահպանման պատշաճ մեխանիզմներ՝ Կիրառելի օրենսդրությամբ սահմանված նվազագույն պահանջներին համապատասխան:

WILCO

7.2. Ընկերությունը պարտավոր է ընդունել հանձնարարականները, եթե դրանք համապատասխանում են Կիրառելի օրենսդրությանը, ներքին ընթացակարգերին և Հաճախորդի հետ կնքված Պայմանագրի դրույթներին, այդ թվում՝ եթե հանձնարարականը՝

7.2.1. ներկայացվել է պատշաճ լիազորված անձի կողմից,

7.2.2. պարունակում է գործարքի էական պայմանները (արժեթղթի տեսակը, թողարկողի անվանումը, ISIN/NSIN ծածկագիրը, քանակը, գործարքի հիմքը, իսկ անհրաժեշտության դեպքում՝ գումարը կամ արժույթը),

7.2.3. ներկայացվել է Հայաստանի Հանրապետությունում կիրառվող աշխատանքային ժամերի ընթացքում:

7.3. Պահառուն Հաճախորդի հանձնարարականի կատարումն իրականացնում է Գործընկերոջ միջոցով միայն այն դեպքում, եթե Հաճախորդի Հաշվում առկա են բավարար արժեթղթեր և/կամ դրամական միջոցներ՝ հանձնարարականի կատարման, Պահառուի վարձատրության և դրա հետ կապված հնարավոր ծախսերի վճարումն ապահովելու համար:

7.4. Հանձնարարականի ընդունումը կարող է մերժվել, այդ թվում՝ հետևյալ դեպքերում.

7.4.1. Հաճախորդի նույնականացումը հնարավոր չէ իրականացնել Ընկերության կողմից սահմանված կարգով,

7.4.2. հանձնարարականը հակասում է Կիրառելի օրենսդրությանը, Ընկերության ներքին կանոնակարգերին կամ ընդունված ռիսկային սահմանափակումներին,

7.4.3. Հաշվում առկա չեն բավարար Հաճախորդի ակտիվներ՝ գործարքի կատարման կամ անհրաժեշտ վճարումների ապահովման համար:

7.5. Ընկերությունը կարող է հանձնարարականներն իրականացնել ինքնուրույն կամ, անհրաժեշտության դեպքում, դրանք փոխանցել Գործընկերներին՝ կատարման նպատակով: Գործարքների իրականացման ժամանակ Ընկերությունը ղեկավարվում է Հաճախորդի լավագույն շահերի ապահովման սկզբունքով:

7.6. Հաճախորդի հանձնարարականների հիման վրա իրականացված փոխանցումները, գրավների գրանցումները, կորպորատիվ գործողությունների արտացոլումը և պահառության այլ գործառնությունները հաշվառվում են Գործընկերոջ ներքին հաշվառման համակարգում և Հաճախորդի Հաշվում՝ օրենքով և Կենտրոնական բանկի կողմից հաստատված նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով:

7.7. Հաճախորդի հանձնարարականը համարվում է ընդունված մշակման, երբ այն գրանցվում է Ընկերության համակարգերում կամ ստացվում է Ընկերության կողմից:

WILCO

7.8. Ընկերությունը կարող է հանձնարարականները կատարել ամբողջությամբ կամ մասնակիորեն՝ կախված շուկայական պայմաններից, ակտիվների առկայությունից, հաշվարկային համակարգերի սահմանափակումներից կամ Գործընկերների պահանջներից:

7.9. Ընկերությունը պատասխանատվություն չի կրում որևէ հանձնարարականի չկատարման, մասնակի կատարման կամ կատարման ուշացման համար, եթե դա պայմանավորված է Գործընկերների, քլիրինգային համակարգերի, հաշվարկային համակարգերի կամ շուկայական ենթակառուցվածքների գործողություններով կամ անգործությամբ:

7.10. Ընկերությունը չի երաշխավորում հանձնարարականների կատարումը որևէ հստակ ժամկետում, ներառյալ շուկայական պրակտիկայով կամ հաշվարկային համակարգերով նախատեսված հաշվարկային ժամկետներում:

8. ՀԱՇՎԱՐԿՆԵՐԻ ԱՎԱՐՏԱԿԱՆ ԿԱՏԱՐՈՒՄԸ ԵՎ ՊԱՀԱՌՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԻ ԳԾՈՎ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

8.1. Հաճախորդի հանձնարարականների կամ թողարկողներից և Գործընկերներից ստացված տեղեկատվության հիման վրա Ընկերությունը կազմակերպում է համապատասխան արժեթղթերի կամ դրամական միջոցների փոխանցումը և/կամ հաշվառումը Հաճախորդի Հաշվում՝ ստուգելով գործարքների պատշաճ իրականացումը Կիրառելի օրենսդրությանը համապատասխան:

8.2. Հաճախորդի կողմից Պահառուին ներկայացված յուրաքանչյուր հանձնարարական համարվում է լիազորություն՝ Հաճախորդի անունից և հաշվին համապատասխան գրառումներ և հաշվառումներ կատարելու համար:

8.3. Հաճախորդը պարտավոր է ապահովել իր Հաշվում բավարար քանակով արժեթղթերի և/կամ դրամական միջոցների առկայությունը՝ հանձնարարականի պատշաճ կատարման, Ընկերության միջնորդավճարների և դրա հետ կապված հնարավոր ծախսերի վճարման համար: Ընկերությունը պատասխանատվություն չի կրում դրամական միջոցների կամ ակտիվների անբավարարության պատճառով հանձնարարականի չկատարման համար:

8.4. Հաճախորդի Հաշվից դրամական միջոցների դուրսբերումը կատարվում է միայն նախկինում գործարքների համար օգտագործված բանկային հաշվեհամարին՝ Հաճախորդի կողմից սահմանված ձևով ներկայացված ծանուցման հիման վրա: Այլ հաշվեհամարին փոխանցում իրականացնելու համար Ընկերությունը կարող է պահանջել լրացուցիչ փաստաթղթեր և հիմնավորումներ՝ Կիրառելի օրենսդրությամբ սահմանված ընթացակարգերին համապատասխան որոշում ընդունելու նպատակով: Ընկերությունն իրեն իրավունք է վերապահում մերժել կամ հետաձգել նման փոխանցումները, եթե դա անհրաժեշտ է ներքին կանոնակարգերի և պատժամիջոցների վերաբերյալ պահանջների պահպանման նպատակով:

8.5. Ընկերության կողմից Հաճախորդի Հաշվում կատարված գրառումները հանդիսանում են Հաճախորդի՝ արժեթղթերի և դրամական միջոցների նկատմամբ իրավունքների ճանաչման իրավական հիմք:

WILCO

8.6. Ընկերությունը կատարում է միայն այնպիսի գրառումներ, որոնք հիմնված են պատշաճ կերպով ձևակերպված և իրավաբանորեն վավեր փաստաթղթերի վրա:

8.7. Բոլոր գործառնությունները, ներառյալ՝ փոխանցումները, մուտքագրումները, հաշվառումը և վերջնական հաշվարկները, իրականացվում են էլեկտրոնային եղանակով:

8.8. Ընկերությունը գործարքներն իրականացնում է բացառապես Հաճախորդի հանձնարարականների, Կիրառելի օրենսդրությամբ սահմանված կարգով իրավասու մարմինների որոշումների, ինչպես նաև համագործակցող անձանց կողմից ներկայացված փաստաթղթերի հիման վրա:

8.9. Հանձնարարականները համարվում են վավեր, եթե դրանք պատշաճ կերպով լրացվել և ստորագրվել են Հաճախորդի կամ նրա լիազորված ներկայացուցչի կողմից թղթային եղանակով, ներկայացվել են Ընկերության կողմից տրամադրված հարթակի միջոցով կամ ուղարկվել են էլեկտրոնային փոստով: Էլեկտրոնային փոստով հաղորդակցությունը համարվում է իրավաբանորեն վավեր, եթե իրականացվել է Պայմանագրում նշված և Ընկերության կողմից ճանաչված էլեկտրոնային հասցեներից:

8.10. Համատեղ սեփականության իրավունքով պատկանող ակտիվների դեպքում հանձնարարականներն ընդունվում են բոլոր համասեփականատերերի կողմից համատեղ ստորագրված հանձնարարականի կամ նրանց կողմից լիազորված անձին տրված լիազորագրի հիման վրա:

8.11. Ընկերությունն իրավունք ունի իր հայեցողությամբ կասեցնելու և/կամ մերժելու ցանկացած հանձնարարականի կատարումը, եթե դա անհրաժեշտ է գործառնական, ռիսկերի կառավարման, կարգավորիչ կամ համապատասխանության նպատակներով:

8.12. Հաճախորդը պարտավոր է Պայմանագրով սահմանված ժամկետներում տեղեկացնել Ընկերությանը իր Հաշվում գրանցված տեղեկությունների ցանկացած փոփոխության մասին:

8.13. Ընկերությունը պարտավոր է թողարկողներից և պահառուներից ստացված տեղեկատվության հիման վրա մեկ (1) աշխատանքային օրվա ընթացքում կատարել համապատասխան փոփոխությունները հաշվառման համակարգում: Աշխատանքային օր է համարվում Հայաստանի Հանրապետությունում պաշտոնապես սահմանված աշխատանքային օրը:

8.14. Ընկերությունը կարող է բացահայտել արժեթղթերի գրանցված (անվանական) սեփականատերերի վերաբերյալ տեղեկատվությունը՝ Կիրառելի օրենսդրության, կարգավորող պահանջների կամ իրավասու մարմինների կամ գործընկեր հաստատությունների հարցումների հիման վրա:

8.15. Ընկերությունն իրավունք ունի առանց Հաճախորդի նախնական համաձայնության ուղղել Հաճախորդի Հաշվում առկա ցանկացած տեխնիկական, հաշվապահական կամ հաշվառման սխալ, այդ թվում՝ համապատասխան գրառումներ կատարելու կամ հակադարձ գրանցումներ իրականացնելու միջոցով՝ այդ մասին հնարավորինս սեղմ ժամկետում տեղեկացնելով Հաճախորդին:

9. ԿՈՐԱՊՈՐԱՏԻՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐՏԱՑՈՒՈՒՄԸ

9.1. Ընկերությունը պարտավոր է ապահովել թողարկողների կողմից իրականացվող կորպորատիվ գործողությունների պատշաճ արտացոլումը Հաճախորդի Հաշվում հաշվառված արժեթղթերի նկատմամբ:

9.2. Կորպորատիվ գործողությունները կարող են ներառել, սակայն չսահմանափակվել հետևյալով՝

9.2.1. շահաբաժինների և արժեկտրոնային վճարումների բաշխում,

9.2.2. արժեթղթերի փոխարկում,

9.2.3. արժեթղթերի չեղարկում (մարում),

9.2.4. արժեթղթերի բաժանում (split) և համախմբում (consolidation),

9.2.5. նոր արժեթղթերի թողարկում կամ բաժանորդագրություն,

9.2.6. թողարկողի կանոնադրությամբ կամ օրենսդրությամբ նախատեսված այլ գործողություններ:

9.3. Ընկերությունը պարտավոր է Հաճախորդին տեղեկացնել կորպորատիվ գործողությունների մասին անմիջապես համապատասխան ֆինանսական գործիքի թողարկողից կամ Գործընկերոջից այդ տեղեկատվությունը ստանալուց հետո, սակայն ոչ ուշ, քան երեք (3) աշխատանքային օրվա ընթացքում: Աշխատանքային օրը մեկնաբանվում է Կիրառելի օրենսդրությանը համապատասխան:

9.4. Այն դեպքերում, երբ Ընկերությանը տեղեկացվել է, որ կորպորատիվ գործողության իրականացումը պահանջում է Հաճախորդի որոշում կամ լրացուցիչ փաստաթուղթ (օրինակ՝ բաժանորդագրություն, քվեարկության վերաբերյալ հանձնարարական), Ընկերությունը պարտավոր է այդ պահանջի մասին տեղեկացնել Հաճախորդին և համապատասխան գործողությունն իրականացնել միայն Հաճախորդի հանձնարարականի հիման վրա:

9.5. Ընկերությունը չի երաշխավորում Հաճախորդի մասնակցությունը որևէ կորպորատիվ գործողության, եթե Հաճախորդի հանձնարարականը ստացվել է սահմանված վերջնաժամկետից (cut-off time) հետո, չի համապատասխանում սահմանված պահանջներին, կամ եթե թողարկողի կամ Գործընկերոջ կողմից կորպորատիվ գործողության վերաբերյալ տեղեկատվությունը սխալ է փոխանցվել կամ ուշացվել է: Վերջնաժամկետից հետո ստացված հանձնարարականները մշակվում են հնարավոր առավելագույն ջանքերի (best efforts basis) սկզբունքով:

9.6. Հաճախորդը պարտավոր է վճարել կորպորատիվ գործողությունների մշակման հետ կապված բոլոր կիրառելի վճարները, գանձումները և միջնորդավճարները՝ Ընկերության սակագներին համապատասխան: Ընկերությունն իրավասու է առանց լրացուցիչ հանձնարարականի այդ գումարները գանձել Հաճախորդի հաշվից:

WILCO

9.7. Ընկերությունը պատասխանատվություն չի կրում կորպորատիվ գործողությունների իրականացման հետ կապված որևէ ձախողման կամ ուշացման համար, եթե դրանք պայմանավորված են թողարկողների, Գործընկերների, շուկայական ենթակառուցվածքների կամ այլ երրորդ անձանց գործողություններով կամ անգործությամբ:

9.8. Կորպորատիվ գործողությունների արդյունքում առաջացող ցանկացած հարկի, տուրքի կամ այլ պարտադիր վճարի համար բացառապես պատասխանատու է Հաճախորդը:

9.9. Ընկերությունն իրեն իրավունք է վերապահում մերժել կամ կասեցնել մասնակցությունը որևէ կորպորատիվ գործողության, եթե այդ մասնակցությունը կարող է հակասել կիրառելի օրենքների, կարգավորող պահանջների կամ Ընկերության ներքին կանոնակարգերին և քաղաքականություններին, ներառյալ՝ պատժամիջոցների վերաբերյալ պահանջները:

10. ԱՐԺԵԹՂԵՐԻ ՓՈԽԱՆՑՄԱՆ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ

10.1. Արժեթղթերի փոխանցման շրջանակում Ընկերությունը Գործընկերների միջոցով կազմակերպում է հետևյալ տեսակի գործառնությունները.

10.1.1. վճարում չնախատեսող փոխանցումներ (Free of Payment, FOP),

10.1.2. առաքում՝ վճարման դիմաց փոխանցումներ (Delivery Versus Payment, DVP),

10.1.3. ներքին փոխանցումներ անվանական հաշիվների միջև:

10.2. FOP փոխանցումների համար Հաճախորդը պետք է ներկայացնի հանձնարարական, որը նվազագույնը պետք է պարունակի հետևյալ տեղեկությունները.

10.2.1. փոխանցող և ստացող կողմերի անվանումները և հաշվային տվյալները,

10.2.2. արժեթղթերի թողարկողի անվանումը և ISIN/NSIN ծածկագիրը,

10.2.3. փոխանցվող արժեթղթերի քանակը,

10.2.4. գործարքի հիմքը և, անհրաժեշտության դեպքում, գինը,

10.2.5. վերջնական շահառու սեփականատիրոջ նույնականացման տվյալները (անվանական հաշիվների դեպքում):

10.3. DVP փոխանցումների դեպքում հանձնարարականը պետք է ներառի նաև՝

10.3.1. վճարման գումարը և արժույթը,

10.3.2. գործարքի և հաշվարկի ամսաթվերը,

10.3.3. անհրաժեշտության դեպքում՝ այլ էական տեղեկություններ:

10.4. Արժեթղթերը կարող են փոխանցվել Հաճախորդի Հաշվից՝

10.4.1. Հաճախորդի հանձնարարականի հիման վրա, այդ թվում՝ վաճառքի, նվիրատվության, ժառանգման, գրավից ազատման կամ հաշվի փակման դեպքերում,

10.4.2. դատարանի ակտի կամ իրավասու մարմնի որոշման հիման վրա,

10.4.3. Պայմանագրով նախատեսված այլ դեպքերում:

10.5. Հանձնարարականը համարվում է հետկանչելի մինչև այն պահը, երբ այն մուտքագրվել է Գործընկերոջ համակարգերում և գործարքը վերջնականապես համադրվել (matched) է: Դրանից հետո փոփոխություններ կարող են կատարվել միայն կողմերի փոխադարձ համաձայնությամբ:

11. ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՆԿԱՏՄԱՍԲ ԳՐԱՎԻ ԵՎ ԱՅԼ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ ԵՎ ՂԱԴԱՐՑՈՒՄԸ

11.1. Արժեթղթերի նկատմամբ գրավի և երրորդ անձանց այլ իրավունքների գրանցումն ու դադարեցումն իրականացվում են Կիրառելի օրենսդրությանը և գրավի պայմանագրի պայմաններին համապատասխան:

11.2. Ընկերությունում գրավի գրանցման համար Հաճախորդը (որպես գրավատու) պետք է ներկայացնի հետևյալ տեղեկությունները և փաստաթղթերը.

11.2.1. արժեթղթերի թողարկողի անվանումը և ISIN/NSIN ծածկագիրը,

11.2.2. գրավատուի և գրավառուի հաշվային տվյալները,

11.2.3. գրավադրվող արժեթղթերի քանակը,

11.2.4. գրավի գործողության ավարտի ամսաթիվը (առկայության դեպքում),

11.2.5. գրավառուի նույնականացման տվյալները,

11.2.6. գրավի գրանցման հանձնարարականը և գրավի պայմանագիրը,

11.2.7. Ընկերության կողմից պահանջվող ցանկացած լրացուցիչ տեղեկատվություն:

11.3. Գրավադրված արժեթղթերի հետ կապված գործառնություններն իրականացվում են բացառապես գրավատուի և գրավառուի համատեղ հանձնարարականի հիման վրա:

11.4. Հաջորդական (երկրորդական) գրավի գրանցումը թույլատրվում է, եթե այն արգելված չէ արժեթղթերի թողարկման պայմաններով:

11.5. Գրավի արտադատական կարգով իրացման համար գրավառուն (Հաճախորդը) պարտավոր է ներկայացնել համապատասխան փաստաթղթերի բնօրինակները կամ պատշաճ կարգով

WILCO

վավերացված պատճենները, ներառյալ՝ գրավի պայմանագիրը, ծանուցումները, հանձնարարականները և անհրաժեշտ այլ հիմնավորող փաստաթղթեր:

11.6. Փաստաթղթերը ստանալուց հետո Ընկերությունը կատարում է դրանց ուսումնասիրությունը և, եթե դրանք համապատասխանում են սահմանված պահանջներին, հինգ (5) աշխատանքային օրվա ընթացքում Ընկերությունում վարվող Հաշվում գրանցում է գրավը:

11.7. Գրավը կարող է դադարել հետևյալ դեպքերում.

11.7.1. գրավի գործողության ժամկետի ավարտի դեպքում,

11.7.2. կողմերի փոխադարձ համաձայնությամբ,

11.7.3. արժեթղթերի չեղարկման կամ մարման դեպքում,

11.7.4. իրավասու մարմնի որոշման հիման վրա,

11.7.5. օրենքով նախատեսված այլ դեպքերում:

12. ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՉԵՂԱՐԿՈՒՄԸ, ԲԼՈՎԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԱՊԱԲԼՈՎԱՎՈՐՈՒՄԸ

12.1. Արժեթղթերի չեղարկումն իրականացվում է իրավական ուժ ունեցող համապատասխան հիմքերի առկայության դեպքում, ներառյալ՝ թողարկողի, Գործընկերների, իրավասու մարմինների հանձնարարականների հիման վրա, ինչպես նաև Կիրառելի օրենսդրությանը համապատասխան:

12.2. Հաշվի բլոկավորման վերաբերյալ որոշում կարող է ընդունվել՝

12.2.1. Հաճախորդի հանձնարարականի հիման վրա,

12.2.2. իրավասու մարմնի որոշման հիման վրա,

12.2.3. Ընկերության նախաձեռնությամբ՝ պայմանագրային պարտավորությունների, Կիրառելի օրենսդրության, փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի (ՓԼ/ԱՖ) պահանջների կամ պատժամիջոցների վերաբերյալ կանոնակարգերի խախտման կամ խախտման հիմնավոր կասկածի դեպքում:

12.3. Հաշվի կամ արժեթղթերի ապաբլոկավորումը կարող է իրականացվել Հաճախորդի հանձնարարականի հիման վրա կամ համապատասխան իրավական հիմքերի առաջացման դեպքում՝ անհրաժեշտության դեպքում սահմանափակումը կիրառած անձի կամ մարմնի համաձայնությամբ:

12.4. Ընկերությունն իրավունք ունի անհապաղ կիրառել բլոկավորում կամ այլ սահմանափակումներ, եթե դա անհրաժեշտ է Կիրառելի օրենսդրության, պատժամիջոցների պահանջների, ՓԼ/ԱՖ պարտավորությունների կամ պարտադիր կարգավորող ցուցումների պահպանման նպատակով:

WILCO

12.5. Ընկերությունը պատասխանատվություն չի կրում որևէ վնասի, ուշացման կամ գործարքների իրականացման անհնարինության համար, եթե դրանք պայմանավորված են ՓԼ/ԱՖ հիմքերով Ընկերության կողմից կիրառված բլոկավորմամբ, չեղարկմամբ կամ սահմանափակումներով, ինչպես նաև Գործընկերների, իրավասու մարմինների կամ շուկայական ենթակառուցվածքների կողմից կիրառված սահմանափակումներով:

12.6. Այն սահմանափակումը կամ բլոկավորումը, որը կիրառվել է ոչ Հաճախորդի նախաձեռնությամբ, չի կարող վերացվել Հաճախորդի պահանջով առանց այն կիրառած իրավասու մարմնի կամ Ընկերության համաձայնության:

13. ՀԱՇՎՈՒՄ ՀԱՇՎԱՌՎՈՂ ՀԱՃԱԽՈՐԴԻ ԱԿՏԻՎՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԵՎ ԱԿՏԻՎՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ

13.1. Հաճախորդների Հաշիվներում հաշվառվող ակտիվների պաշտպանության ապահովման նպատակով Ընկերությունը ձեռնարկում է հետևյալ միջոցները.

13.1.1. Առանձնացված հաշվառում – Ընկերությունը յուրաքանչյուր Հաճախորդի ակտիվները հաշվառում է առանձին՝ դրանք տարբերակելով ինչպես Ընկերության սեփական ակտիվներից, այնպես էլ այլ Հաճախորդների ակտիվներից՝ օգտագործելով առանձին հաշիվներ և ներքին հաշվառման համակարգ:

13.1.2. Գործընկեր-պահառուների ընտրության համապարփակ ընթացակարգ – Ընկերությունն ընտրում է պահառուներին՝ հաշվի առնելով նրանց հուսալիությունը, իրավական կարգավիճակը և գործարքների պատշաճ կատարման երաշխիքները:

13.1.3. Ներքին վերահսկողություն և աուդիտ – Ընկերությունը մշակում և կիրառում է վերահսկողական մեխանիզմներ՝ ակտիվների պատահական կամ դիտավորյալ ոչ պատշաճ օգտագործման ռիսկը նվազագույնի հասցնելու նպատակով:

13.1.4. Շահերի բախման կանխարգելում – Ընկերությունն առաջնորդվում է ներքին կանոնակարգերով՝ շահերի բախումները բացահայտելու և նվազեցնելու նպատակով:

13.1.5. Պարբերական համադրումներ – Ընկերությունը պարբերաբար համադրում է իր ներքին հաշվառման տվյալները պահառուների և այլ Գործընկերների կողմից տրամադրված տեղեկատվության հետ:

13.2. Հաճախորդի Հաշվում հաշվառված արժեթղթերը ենթակա են առանձնացված հաշվառման՝ սեփականության իրավունքի, շահառու սեփականության իրավունքի և կիրառելի սահմանափակումների հիման վրա:

13.3. Ընկերությունը կարող է օգտագործել Հաճախորդի ակտիվները իր անունից միայն այն դեպքում, եթե նման իրավունքը նախատեսված է Պայմանագրով կամ առկա է Հաճախորդի նախնական գրավոր համաձայնությունը:

WILCO

13.4. Ընկերությունը կարող է իր անունից գրավադրել Հաճախորդի ակտիվները միայն Հաճախորդի նախնական գրավոր լիազորման հիման վրա և Հաճախորդի կողմից սահմանված պայմաններով:

13.5. Հաշվում պահվող ակտիվների նկատմամբ տոկոսներ չեն հաշվարկվում և չեն վճարվում, եթե այլ բան ուղղակիորեն նախատեսված չէ Սակագներով կամ Պայմանագրով:

13.6. Ընկերությունը կարող է Հաճախորդի ակտիվները պահել ինչպես Հայաստանի Հանրապետությունում, այնպես էլ արտերկրում՝ արժեթղթային կամ բանկային հաշիվներում, պայմանով, որ համապատասխան հաստատությունը լիազորված է մատուցել պահառության ծառայություններ: Հաճախորդը սույնով տալիս է իր համաձայնությունը նման պահառության իրականացմանը:

13.7. Ծառայությունների մատուցման նպատակով օգտագործվող կամ գործարքների արդյունքում ստացված Հաճախորդի բոլոր ակտիվները հաշվառվում են Հաճախորդի Հաշվում: Անհրաժեշտության դեպքում կարող են բացվել առանձին Հաշիվներ՝ ըստ արժույթի կամ ակտիվի տեսակի:

14. ՌԻՍԿԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՆՎԱՋԵՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

14.1. Պահառության ծառայությունների մատուցումը ներառում է շուկայական, իրավական և տեխնիկական գործոններից բխող մի շարք ռիսկեր: Այդ ռիսկերը ներառում են, սակայն չեն սահմանափակվում հետևյալով.

14.1.1. Հաճախորդի ակտիվների վրա ազդեցության ռիսկ՝ պայմանավորված երրորդ անձ հանդիսացող Գործընկերների ձախողմամբ, սխալներով կամ սահմանափակումներով,

14.1.2. գործառնական ռիսկեր՝ կապված գործարքների մշակման, հաղորդակցության և տեխնիկական համակարգերի աշխատանքի հետ,

14.1.3. թողարկողի կամ երրորդ անձանց կողմից կորպորատիվ գործողությունների իրականացման ուշացման կամ ոչ պատշաճ կատարման ռիսկ,

14.1.4. տարբեր շուկաներում կիրառվող իրավական և կարգավորող սահմանափակումներից բխող ռիսկեր,

14.1.5. արժութային փոխարկման և դրամական միջոցների փոխանցման հետ կապված ռիսկեր:

14.2. Գործարքների իրականացման դեպքում պահառության ծառայությունների հետ կապված ռիսկերը կրում է Հաճախորդը: Ընկերությունը չի փոխհատուցում Հաճախորդի կրած վնասները, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք առաջացել են Ընկերության անբարեխիղճ վարքագծի կամ սույն Կանոնակարգի պահանջներին չհամապատասխանող գործողությունների հետևանքով: Եթե Ընկերությունը 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում չի վերացնում իր անբարեխիղճ վարքագծի կամ Կանոնակարգին չհամապատասխանող գործողությունների հետևանքները, ապա Ընկերությունը փոխհատուցում է միայն իր մեղքով պատճառված ուղղակի վնասները:

WILCO

14.3. Հաճախորդը պետք է գիտակցի, որ Պահառուի կամ գործընկեր-պահառուների կողմից նախկինում հաջողությամբ իրականացված գործարքները չեն երաշխավորում նմանատիպ արդյունքներ ապագայում:

14.4. Հաշվի առնելով, որ ռիսկը շուկայական հարաբերությունների անբաժանելի և օբյեկտիվ բաղադրիչ է և չի կարող ամբողջությամբ բացառվել, Ընկերությունը պարտավորվում է ստեղծել և պահպանել ռիսկերի կառավարման արդյունավետ համակարգ՝ ուղղված ռիսկերի հնարավորինս կանխատեսմանը, կանխարգելմանը և/կամ նվազեցմանը՝ Ընկերության և Հաճախորդների շահերին ու Կիրառելի օրենսդրության պահանջներին համապատասխան:

15. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

15.1. Ընկերությանն արգելվում է՝

15.1.1. իրականացնել պահառության գործունեություն՝ խախտելով Կիրառելի օրենսդրության, սույն Կանոնակարգի կամ Հաճախորդի հետ կնքված Պայմանագրի դրույթները, ներառյալ՝ գործարքների իրականացումը առանց պատշաճ հանձնարարականի կամ հանձնարարականով սահմանված շրջանակներից դուրս,

15.1.2. ընդունել կամ իրականացնել գործարքներ այնպիսի ակտիվների նկատմամբ, որոնց պահառությունն արգելված է Կիրառելի օրենսդրությամբ,

15.1.3. առանց Հաճախորդի նախնական գրավոր համաձայնության Հաճախորդի դրամական միջոցներն օգտագործել որպես ապահովություն կամ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունների կատարման երաշխիք,

15.1.4. օգտագործել Հաճախորդի դրամական միջոցները սեփական կամ որևէ երրորդ անձի շահերից ելնելով, եթե նման օգտագործումը հիմնված չէ Հաճախորդի հանձնարարականի կամ կողմերի համաձայնեցված պայմանների վրա:

15.2. Ընկերությունը կարող է միաժամանակ պահառության ծառայություններ մատուցել մի քանի Հաճախորդների և միաժամանակ գործարքներ իրականացնել իր հաշվին: Դա կարող է հանգեցնել շահերի բախման՝ Ընկերության և Հաճախորդի, ինչպես նաև տարբեր Հաճախորդների միջև:

15.3. Շահերի բախման դեպքում Ընկերությունը գործում է Հաճախորդի շահերի գերակայության սկզբունքով և ձեռնարկում է բոլոր անհրաժեշտ միջոցները՝ շահերի բախումը կանխելու կամ նվազեցնելու նպատակով:

15.4. Ընկերությունը պարտավորվում է ապահովել բոլոր Հաճախորդների նկատմամբ արդար և հավասար վերաբերմունք՝ առանց անհիմն նախապատվությունների՝ հաշվի առնելով նրանց դասակարգումը և Պայմանագրի պայմանները:

15.5. Իր հաշվին գործարքներ իրականացնելիս Ընկերությունը պարտավոր է ապահովել, որ այդ գործարքները որևէ կերպ չազդեն Հաճախորդի հանձնարարականների կատարման արագության,

WILCO

առաջնահերթության կամ արդարության վրա: Հաճախորդի հանձնարարականները պետք է կատարվեն առնվազն այնպիսի պայմաններով, որոնք կկիրառվեն, եթե գործարքն իրականացվեր բացառապես Հաճախորդի շահերից ելնելով:

15.6. Միաժամանակ մի քանի Հաճախորդների հանձնարարականներ ստանալու դեպքում Ընկերությունը պարտավոր է առաջնորդվել արդար բաշխման սկզբունքով: Եթե տեխնիկապես հնարավոր չէ բոլոր հանձնարարականները կատարել ամբողջությամբ, Ընկերությունը կատարումը բաշխում է համամասնորեն՝ յուրաքանչյուր Հաճախորդի հանձնարարականի ծավալին համապատասխան:

15.7. Ընկերությունը և Հաճախորդը պատասխանատվություն են կրում սույն Կանոնակարգով և Պայմանագրով սահմանված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:

15.8. Յուրաքանչյուր Կողմ պատասխանատվություն է կրում իր կողմից տրված հավաստիացումների, հայտարարությունների և երաշխիքների ճշգրտության համար և պարտավոր է մյուս Կողմին հատուցել դրանց խախտման հետևանքով պատճառված վնասները: Կողմն ազատվում է պատասխանատվությունից, եթե խախտումը պայմանավորված է մյուս Կողմի կողմից ներկայացված կեղծ կամ ոչ ճշգրիտ տեղեկություններով:

15.9. Ընկերությունը պատասխանատվություն չի կրում Հաճախորդին պատճառված վնասների համար, որոնք առաջացել են երրորդ անձանց, այդ թվում՝ Գործընկերների (պահառուների, գործակալների կամ գործարքի մյուս կողմերի) կողմից պարտավորությունների չկատարման, ոչ պատշաճ կատարման կամ չիրականացման հետևանքով, բացառությամբ այն դեպքերի, երբ Ընկերությունը գործել է դիտավորությամբ կամ հանցավոր անփութությամբ:

15.10. Ընկերությունը չի երաշխավորում և պատասխանատվություն չի կրում Գործընկերների կողմից գործարքների պատշաճ կատարման համար:

15.11. Ընկերությունը պատասխանատվություն չի կրում տեխնիկական խափանումների, համակարգերի աշխատանքի ընդհատումների, տվյալների անհասանելիության կամ ոչ ճշգրտության, ինչպես նաև վերազգային ցանցերի, բանկային կամ բորսայական հարթակների գործունեության խափանումների հետևանքով առաջացած կորուստների կամ ակտիվների արժեզրկման համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք առաջացել են Ընկերության դիտավորության կամ կոպիտ անփութության հետևանքով:

15.12. Ընկերության համակարգերն ու տեխնոլոգիական լուծումները, ներառյալ, սակայն չսահմանափակվելով էլեկտրոնային փոստի համակարգերով, Հաճախորդին տրամադրվում են «ինչպես առկա են» («as is») սկզբունքով: Ընկերությունը չի տալիս որևէ երաշխիք դրանց ճշտության, հուսալիության կամ Հաճախորդի ակնկալիքներին համապատասխանելու վերաբերյալ:

15.13. Ընկերությունը պատասխանատվություն չի կրում պատժամիջոցների, սահմանափակումների, իրավական արգելքների կամ արտաքին կարգավորող մարմինների որոշումների հետևանքով առաջացած կորուստների համար, նույնիսկ եթե դրանք հանգեցրել են գործարքի չկատարման կամ Հաճախորդի միջոցների կորստի:

WILCO

15.14. Ընկերությունը պարտավոր չէ հատուցել Հաճախորդին այն վնասները, որոնք առաջացել են հանձնարարականի չկատարման հետևանքով, եթե դրա պատճառը տեխնիկական, իրավական կամ փաստացի անհնարինությունն է՝ անկախ նման անհնարինության պատճառներից:

15.15. Ընկերությունը օրենքով սահմանված կարգով պաշտպանում է իր կողմից փոխանցվող տեղեկատվությունը, սակայն պատասխանատվություն չի կրում երրորդ անձանց կողմից այդ տեղեկատվության չարտոնված բացահայտման կամ ոչ պատշաճ օգտագործման համար, եթե Ընկերությունն անմիջականորեն ներգրավված չի եղել նման գործողություններում:

15.16. Ընկերության պատասխանատվությունը սահմանափակվում է բացառապես այն դեպքերով, երբ ուղղակի վնասը պատճառվել է Ընկերության դիտավորյալ գործողությունների կամ կոպիտ անփութության հետևանքով: Ցանկացած անուղղակի, ածանցյալ կամ հետևանքային վնասների համար պատասխանատվությունը բացառվում է:

15.17. Հաճախորդը պարտավոր է փոխհատուցել Ընկերության այն ծախսերն ու վնասները, որոնք առաջացել են Հաճախորդի գործողությունների և/կամ անգործության հետևանքով, եթե այդ ծախսերը կամ վնասները բխում են երրորդ անձանց պահանջներից կամ կապված են դրանց հետ:

15.18. Ընկերությունը և Հաճախորդն ազատվում են Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման համար պատասխանատվությունից, եթե այդ չկատարումը պայմանավորված է անհաղթահարելի ուժի (ֆորս-մաժոր) հանգամանքներով, ներառյալ՝ բնական աղետներով, պատերազմով, զանգվածային անկարգություններով կամ իրավական սահմանափակումներով:

16. ՎՃԱՐՆԵՐԻ ԵՎ ՍԱԿԱԳՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ

16.1. Ընկերության կողմից Հաճախորդին պահառության ծառայություններ մատուցելու դիմաց գանձվում է վճար՝ համաձայն «Ընկերության կողմից մատուցվող ծառայությունների համար գանձվող սակագներ» փաստաթղթի դրույթների, որը հանդիսանում է սույն Կանոնակարգի անբաժանելի մասը (այսուհետ՝ «**Սակագներ**»): Սակագները սահմանվում են Ընկերության կողմից միակողմանի կարգով՝ Կիրառելի օրենսդրության պահանջներին համապատասխան:

16.2. Սակագներով սահմանված վճարները կարող են ներառել, ի թիվս այլնի՝

16.2.1. հաշվի բացման, սպասարկման և փակման վճարներ,

16.2.2. արժեթղթերի փոխանցման, գրավի գրանցման կամ կորպորատիվ գործողությունների սպասարկման համար միջնորդավճարներ (տոկոսային և/կամ ֆիքսված չափերով),

16.2.3. արժույթի փոխարկման համար միջնորդավճարներ,

16.2.4. անհրաժեշտության դեպքում՝ պահառուների, գործակալների և այլ երրորդ անձանց կողմից գանձվող վճարների փոխհատուցում:

WILCO

16.3. Վճարները հաշվարկվում և գանձվում են պարբերաբար (ամսական, եռամսյակային կամ տարեկան) կամ յուրաքանչյուր առանձին պահառության գործառնության իրականացման պահին՝ առանց Հաճախորդի լրացուցիչ համաձայնության պահանջի, բացառությամբ այն դեպքերի, երբ այլ բան նախատեսված է Սակագներով կամ Պայմանագրով: Վճարների գանձումն իրականացվում է անակցեպտ կարգով՝ անմիջականորեն Հաճախորդի դրամական հաշվից:

16.4. Հաճախորդը հաստատում և համաձայնում է, որ եթե իր Հաշվում որևէ արժույթով առկա է բացասական մնացորդ, Ընկերությունն իրավասու է, առանց Հաճախորդին նախապես ծանուցելու, այդ բացասական մնացորդը փակել՝ Հաճախորդի Հաշվում այլ արժույթով առկա դրական մնացորդի հաշվին: Այդ դեպքում արժույթի փոխարկումն իրականացվում է Ընկերության կողմից տվյալ պահին գործող շուկայական փոխարժեքով՝ Հաճախորդի համար հնարավորինս նպաստավոր պայմաններով: Նման փոխարկման կամ փոխանցման համար Ընկերությունը պարտավոր չէ ստանալ Հաճախորդի նախնական համաձայնությունը և պատասխանատվություն չի կրում այդ գործողությունների արդյունքում հնարավոր կորուստների համար: Սույն դրույթը չի կիրառվում այն արժույթների նկատմամբ, որոնց մասով Ընկերությունը Պայմանագրով Հաճախորդին տրամադրել է բավարար ծածկույթ չապահովված գործարքներ իրականացնելու հնարավորություն:

16.5. Հաճախորդի հանձնարարականների հիման վրա իրականացված գործարքների հետ կապված վճարները պետք է պատշաճ կերպով հաշվառվեն և արտացոլվեն Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում Հաճախորդին տրամադրվող հաշվետվություններում:

16.6. Այն դեպքերում, երբ պահանջվում է արժույթի փոխարկում, կիրառվող փոխարժեքը սահմանվում է Ընկերության կողմից տվյալ պահին գործող փոխարժեքի հիման վրա՝ հնարավորինս մոտ լինելով շուկայական միջին փոխարժեքին և Հաճախորդի համար առավել նպաստավոր պայմաններին:

16.7. Սակագների ցանկացած փոփոխություն հրապարակվում է Ընկերության պաշտոնական կայքում՝ դրանց կիրառման օրվանից առնվազն 20 (քսան) օր առաջ: Միաժամանակ Հաճախորդները ծանուցվում են Պայմանագրով սահմանված կարգով:

16.8. Հաճախորդն իրավունք ունի Սակագների փոփոխությունների հետ անհամաձայն լինելու դեպքում միակողմանիորեն լուծել Պայմանագիրը՝ առանց տույժերի կամ այլ ֆինանսական հետևանքների՝ այդ մասին նախապես տեղեկացնելով Ընկերությանը:

17. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՔԱՂՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱՆԴՐՈՒՄԸ ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻՆ

17.1. Եթե Ընկերությունը կատարել է Հաճախորդի հանձնարարականը, ապա այն պարտավոր է Հաճախորդին տրամադրել հանձնարարականի կատարման վերաբերյալ հաշվետվություն անհապաղ, սակայն ոչ ուշ, քան գործարքի իրականացումից հետո հաջորդող աշխատանքային օրվա ավարտը՝ Կիրառելի օրենսդրության պահանջներին համապատասխան: Եթե հանձնարարականը կատարվել է մի քանի փուլով, ապա գործարքի յուրաքանչյուր փուլի համար տրամադրվում է առանձին հաշվետվություն:

WILCO

17.2. Յուրաքանչյուր գործարքի գրանցման կամ մերժման վերաբերյալ հաշվետվությունը, քաղվածքը, ծանուցումը կամ տեղեկատվությունը տրամադրվում է Հաճախորդին նրա դիմումը ստանալուց հետո հաջորդ աշխատանքային օրը:

17.3. Յուրաքանչյուր օրացուցային եռամսյակը մեկ անգամ, նախորդ օրացուցային եռամսյակին հաջորդող ամսվա ոչ ուշ, քան 15-րդ օրը, Ընկերությունը Հաճախորդին տրամադրում է հաշվետվություն, տեղեկանք կամ քաղվածք՝ նախորդ եռամսյակի ընթացքում Հաճախորդի Հաշվով իրականացված գործարքների, գործառնությունների և մնացորդների վերաբերյալ:

17.4. Հաճախորդն իրավունք ունի Ընկերությունից պահանջել նաև հետևյալ լրացուցիչ տեղեկատվությունը.

17.4.1. Հաճախորդի Հաշվում գրանցված գրավային իրավունքների վերաբերյալ տեղեկանք,

17.4.2. Կիրառելի օրենսդրությամբ կամ Կենտրոնական բանկի այլ նորմատիվ իրավական ակտերով պահանջվող այլ տեղեկություններ:

17.5. Սույն Կանոնակարգի համաձայն Հաճախորդներին տրամադրվող հաշվետվությունը պետք է առնվազն պարունակի հետևյալ տեղեկությունները.

17.5.1. Ընկերության անվանումը,

17.5.2. Հաճախորդի անունը և ազգանունը (կամ իրավաբանական անձի դեպքում՝ անվանումը) կամ Հաճախորդի նույնականացման համարը,

17.5.3. գործարքի ամսաթիվը՝ տարեթիվը, ամիսը և օրը հաջորդաբար նշելով,

17.5.4. գործարքի կատարման ժամը՝ ժամը և րոպեները հաջորդաբար նշելով,

17.5.5. Հաճախորդի կողմից տրված հանձնարարականը,

17.5.6. գործարքի կատարման վայրը,

17.5.7. արժեթղթի նույնականացման ծածկագիրը, թողարկման համարը (իսկ դրա բացակայության դեպքում՝ թողարկողի անվանումը և արժեթղթի տեսակը, իսկ ածանցյալ գործիքի դեպքում՝ դրա նկարագրությունը),

17.5.8. գործարքի տեսակը՝ հանձնարարականում նշված ձևակերպման համաձայն:

17.6. Եթե հաշվետվություններն ուղարկվում են էլեկտրոնային փոստով, ապա դրանք համարվում են հանձնված Ընկերության ելքային էլեկտրոնային փոստի համակարգում «ուղարկված» կարգավիճակով գրանցվելու պահին:

17.7. Եթե հաշվետվություններն ուղարկվում են փոստային ծառայության միջոցով, ապա հանձնման ամսաթիվ է համարվում առաքման մասին ծանուցման մեջ նշված ամսաթիվը, որը կցվում է Ընկերության մոտ պահպանվող հաշվետվության օրինակին:

WILCO

17.8. Անձամբ տրամադրվող հաշվետվությունները հանձնվում են երկու օրինակից: Հաճախորդը պարտավոր է ստացականը հաստատելու նպատակով ստորագրել մեկ օրինակը, որը վերադարձվում է Ընկերությանը: Ընկերության մոտ պահպանվող օրինակի վրա Հաճախորդի ստորագրության ամսաթիվը համարվում է հանձնման ամսաթիվ:

17.9. Հաշվետվությունը, քաղվածքը կամ տեղեկանքը համարվում է ընդունված և վավեր, եթե Հաճախորդը դրա ստացումից հետո հինգ (5) աշխատանքային օրվա ընթացքում առարկություն չի ներկայացրել:

17.10. Ընկերության լիցենզիայի ուժը կորցնելը հիմք չէ Հաճախորդին հաշվետվություններ տրամադրելուց հրաժարվելու համար: Լիցենզիան կարող է համարվել ուժը կորցրած միայն օրենքով սահմանված կարգով:

18. ՀԱՇՎԻ ՓԱԿՈՒՄԸ ԵՎ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

18.1. Սույն Կանոնակարգը, որպես Պայմանագրի անբաժանելի մաս, Հաճախորդի համար ուժի մեջ է մտնում Պայմանագրի՝ երկու Կողմերի կողմից ստորագրման պահից և գործում է մինչև Պայմանագրի դադարեցումը դրանից բխող բոլոր պարտավորությունների ամբողջական կատարումը:

18.2. Եթե Հաճախորդի Հաշվով վերջին վեց (6) ամիսների ընթացքում որևէ գործառնություն չի իրականացվել և Հաշվում առկա չէ դրական մնացորդ, Ընկերությունն իրավունք ունի դադարեցնել Պայմանագիրը՝ այդ մասին առնվազն տասը (10) օր առաջ ծանուցելով Հաճախորդին:

18.3. Ընկերությունն իրավունք ունի անհապաղ դադարեցնել Պայմանագիրը՝ այդ մասին ծանուցելով Հաճախորդին, եթե՝

18.3.1. Հաճախորդը ներկայացրել է կեղծ կամ ոչ ճիշտ տեղեկատվություն,

18.3.2. առկա է հիմնավոր կասկած, որ Հաշիվն օգտագործվում է անօրինական կամ կասկածելի գործունեության համար,

18.3.3. Ընկերությունը հայտնաբերել է իր հեղինակության կամ գործարար շահերի հետ կապված ռիսկեր,

18.3.4. Հաճախորդի նկատմամբ կայացվել է օրինական ուժի մեջ մտած որոշում, որը ենթակա է կատարման,

18.3.5. Հաճախորդը մահացել է կամ օրենքով սահմանված կարգով ճանաչվել է անհայտ բացակայող,

18.3.6. հաստատվել է, որ Հաճախորդի կողմից տրված հավաստիացումները կամ հայտարարությունները ճշգրիտ չեն:

WILCO

18.4. Պայմանագրի դադարեցումը հանգեցնում է նաև Հաշվի փակմանը, պայմանով, որ Հաշվի մնացորդը զրոյական է: Եթե Հաշվում առկա են ակտիվներ, ապա Հաճախորդը մինչև Պայմանագրի դադարեցումը կամ դրանից անմիջապես հետո պարտավոր է ներկայացնել դրանց փոխանցման վերաբերյալ հանձնարարական և վճարել Սակագներով նախատեսված փոխանցման հետ կապված բոլոր վճարները:

18.5. Եթե Հաճախորդը սահմանված ժամկետում չի ներկայացնում ակտիվների փոխանցման պատշաճ հանձնարարական, Ընկերությունն իրավունք ունի գանձել տույժ՝ Հաշվում մնացած ակտիվների շուկայական արժեքի 0.1%-ի չափով՝ ուշացման յուրաքանչյուր օրվա համար:

Approved by Sole Participant of WILCO LLC – Paradeplatz Limited
Director, Olivia Kassinou



REGULATION ON PROVISION OF CUSTODY SERVICES

